ԿԱՐԾԻՔ

ԱՐՄԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ

« ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1921-1991 ԹԹ.)»

Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական

աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ա. Ասատրյանի թեկնածուական ատենախոսության հիմնական շարադրանքը՝ բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից՝ 121 էջ, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածներից: Ատենախոսության համար հիմնական աղբյուրագիտական հենք են հանդիսացել Հայաստանի Ազգային Արխիվում (այսուհետ՝ ՀԱԱ) պահպանվող Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի, Ս. Էջմիածնի Լուսավորչական Սինոդի, Կաթողիկոսական դիվանի, ինչպես նաև եկեղեցական այլ ֆոնդերի արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև արխիվային վավերագրերի ժողովածուները, տարբեր հեղինակների պատմագիտական աշխատությունները, տպագիր սկզբնաղբյուրները: Համադրված ներկայացվել են ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային շրջանի պատմագիտական մտքի ձեռքբերումները հետազոտված թեմայի բնագավառում, որոնք էլ հնարավորություն են ընձեռել կատարել առաջադրված հիմնախնդրի համալիր պատմաքննություն, անել սկզբունքային արժեորումներ:

Ատենախոսության մեջ արծարծված հարցերը սերտորեն շաղկապված են միմյանց, հեղինակը արդարացիորեն կարևորել է թեման, ընդգծելով, որ Վիրահայոց թեմը Հայ առաքելական սուրբ եկեղեցու անքակտելի մասն է, որի համատեքստում Վրաստանի հայությունը դարերի ընթացքում ստեղծել է հոգևոր-մշակութային անանց արժեքներ՝ արդի փուլում էլ շարունակելով պահպանել իր ազգային նկարագիրն ու դիմագիծը, որում իր մեծ անգնահատելի դերակատարությունն ուներ Վիրահայոց թեմը, որի գործունեության պատմությունը անքակտելիորեն աղերսվում

է վիրահայության և հայ–վրացական հարաբերությունների բազմաշերտ պատմության հետ, որտեղ եղել են և՛ սերտ բարեկամության, և՛ կնճռոտ–բախումնալից էջեր:

Ատենախոսությունում քննարկված հարցերն ունեն արդիական հնչեղություն, քանզի դրանք սերտորեն շաղկապվում են հայ–վրացական հոգևոր–մշակութային առնչությունների հետ, և այս տեսանկյունից ոչ հեռու անցյալի պատմաքաղաքական փորձը և դասերը կարող են օգտակար լինել արդի հարաբերությունները փոխշահավետ ուղիով ուղղորդելու առումով:

Ատենախոսը որոշակի չափով անդրադառնալով Վիրահայոց թեմի նախախորհրդային շրջանի պատմությանը, ակնարկային ձևով անդրադարձել է թեմի դարերի խորքից եկող արմատներին, ինչը կարող էր դառնալ առանձին պատմաքննության թեմա, ցույց տալով ժառանգորդական կապը անցյալ պատմափուլերի և իր հետազոտած ժամանակաշրջանի միջև, հայերի ներդրումը հայ–վրացական դարավոր հոգևոր–մշակութային փոխառնչություններում, նշելով և դրականի և բացասական շերտանստվածքների մասին:

Հեղինակը արդարացիորեն կարևորում է 1918 թ. մայիսյան շրջադարձը անդրկովկասյան ժողովուրդների կյանքում, ինչը պայմանավորված էր պետականության հաստատմամբ թե՛ Հայաստանում, և թե Վրաստանում, և ինչը սահմանագիծ դարձավ Վիրահայոց թեմի նկատմամբ քաղաքականության մեջ, ինչպես և դրան հաջորդած խորհրդային պատմափուլում, խթանելով մի դեպքում Վրաստանի ազգային ուժերի վրացակենտրոն ռազմավարությունը, իսկ մյուս դեպքում՝ խորհրդային ծայրահեղականությունը և համահարթեցնող գործելակերպը, որը պետական ամենաբարձր մակարդակով էր իրագործվում՝ արհեստածին կերպով լարվածության եզրեր ստեղծելով հայ–վրացական հարաբերություններում՝ տեղիք տալով անհարկի բռնաճնշումների, Վիրահայոց թեմի իրավունքների ոտնահարման և սահմանափակման, որի առումով ատենախոսը բերել է պերճախոս օրինակներ, մասնավորապես վկայակոչելով 1921 թ. փետրվարի 21–ին Վրաստանի Սահմանադիր ժողովի կողմից վավերացված Վրաստանի անդրանիկ Սահմանադրությամբ ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին դրույթը, որով պետական քաղաքականության ամենաբարձր մակարդակ բարձրացվեց ազգային–մշակութային

ձուլման քաղաքականությունը, ինչը հեղինակի միանգամայն արդարացի եզրահանգմամբ՝ բացասաբար ազդեց նաև Վիրահայոց թեմի գործունեության վրա, և հաջորդվեց խորհրդային համանման քաղաքականությամբ՝ էապես դժվարացնելով թեմի գործունեությունը:

Ատենախոսի կողմից ըստ ամենայնի կարևորվել է վիրահայոց թեմը գլխավորած Գևորգ արք. Չորեքչյանի ազգանվեր գործունեությունը 1921-1927 թթ. դժվարին մի ժամանակաշրջանում, երբ Վրաստանում տարվեց մեծ պայքար եկեղեցու և հոգևորականության նկատմամբ, որից օգտվելով վրացական խորհրդային իշխանությունները՝ անհիմն մեղադրանքներով բանտարկելով և աքսորելով թեմի հայ հոգևորականներին, փակելով բազմաթիվ եկեղեցիներ, որի դեմ փորձել է պայքարել Գևորգ արք. Չորեքչյանը՝ բազմաթիվ դիմումագրեր հղելով իշխանություններին, ձգտելով կանխել եկեղեցու կազմալուծումը, որը մասնակի արդյունքներ ունեցավ և չձերբազատեց Վիրահայոց թեմը ծանր հարվածներից, հալածանքներից, ձերբակալություններից և աքսորից, բռնագրավումներից, թեմի իրավունքների սահմանափակումներից:

Ատենախոսը խնդիր է դրել հնարավորինս ամբողջական և ամփոփ ներկայացնել Վիրահայոց թեմի տարեգրությունը խորհրդային պատմափուլում, որն իր մեջ ներառել է Թբիլիսիի, Ջավախքի, Աջարիայի, Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում գտնվող հայկական համայնքները՝ մինչև 1930-ական թթ. կեսերը առաջնորդանիստ ունենալով Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցին (միջնադարում՝ Հարանց վանք): Ըստ այդմ, ատենախոսը միաժամանակ սկզբունքորեն կարևորել է թեմի դերը յուրահատուկ կապի օղակի Ս. Էջմիածնի և վրաց պատրիարքարանի միջև:

1941–1945 թթ. եկեղեցու հետ կապված խորհրդային վրաց իշխանությունների և առհասարակ խորհրդային իշխանության կողմից վարվող քաղաքականության փոխակերպումը և Վիրահայոց թեմի նկատմամբ մեղմացումը ատենախոսը արդարացիորեն շաղկապում է իրավիճակի կտրուկ փոփոխության հետ, ինչը պարտադրեց գնալ նոր ավելի հավասարակշռված քայլերի հանուն գլոբալ նպատակների՝ օգտագործելով «Խորհրդային Հայրենիքի» պաշտպանության գաղափարը: Ա. Ասատրյանը հենց այդ հենքի վրա էլ պատմաքննում է Վիրահայոց

թեմի օժանդակությունը և մասնակցությունը մեծ պատերազմին, ինչի ապահովման համար խորհրդային իշխանությունները թույլատրեցին եկեղեցական մարմինների վերաբացումը և որոշակի ազատականացումը, իրավունքների վերականգնումը:

Դիտարժան է ատենախոսության 2–րդ գլխի 2–րդ ենթագլուխը՝ կապված հետպատերազմյան շրջանում հայոց եկեղեցիների վերաբացման հետ Վրաստանում, որը մեծ դժվարությունների հանդիպեց, և որում իր ջանքերն է ներդնում նաև Հայոց Գևորգ Ջ Կաթողիկոսը՝ ձգտելով բարելավել եկեղեցի–պետություն հարաբերությունները, վերաբացել փակված եկեղեցիները, կատարել վերանորոգման աշխատանքներ, աշխուժացնել հոգևոր կյանքը և այլն:

Ատենախոսության 3–րդ գլուխը ևս դիտարժան է, որում դիտարկվել են Վիրահայոց թեմի գործունեության հետ կապված զարգացումները, փորձերը բարելավելու և կարգավորելու թեմի հարաբերությունները վրաց պետական մարմինների հետ: 2–րդ գլխի 2–րդ ենթագլուխը նվիրված է եկեղեցիների վերաբացման և վերանորոգությունների հարցին 1974–1991 թթ., որը համեմատաբար հակիրճ է ներկայացված:

Ա. Ասատրյանը մանրամասն ցույց է տվել Վիրահայոց թեմի գործունեությունը, որը համախմբող դեր է խաղացել և խաղում է Վրաստանի հայկական եկեղեցիների կյանքում, առաջնորդել հայ համայնքը և կազմակերպչական պոզիտիվ դեր խաղացել հայ բնակչության հոգևոր կյանքում, նպաստել տեղի հայ համայնքի կենտրոնացմանը Հայ առաքելական սուրբ եկեղեցու շուրջ՝ էապես կարևորելով հայապահպանության և ազգապահպանության, կրթական, մշակութային հիմնախնդիրների լուծումը, ըստ արժանվույն նշելով Հայ առաքելական սուրբ եկեղեցու բոլոր տոներն ու հիշատակության օրերը, պահպանել ավանդույթներն ու ծիսակատարությունները: Ատենախոսը ըստ ամենայնի արժևորել է Առաջնորդարանի գործունեությունը Վրաստանի հայ թեմապատկան եկեղեցիների, վանքերի ու մատուռների շրջանում, կարևորել հոգևոր, գիտական, կրթական, մշակութային, սպորտային, մանկական ու երիտասարդական զանազան կենտրոնների ու խմբակների գործունեությանը աջակցելը և ուղղորդելը: Ա. Ասատրյանը կարևորել է այն էական հանգամանքը, որ Վիրահայոց թեմը խաղացել է հայապահպանական–ազգապահպան դեր, միավորել

դարերի ընթացքում գործած ավելի քան 400 հայկական եկեղեցիների գործունեությունը, ինչին մեծապես վնասեց 1920–ական թվականներին տեղ գտած խորհրդային պետության հակաեկեղեցական քաղաքականությունը: Ա. Ասատրյանը զգալի տեղ է հատկացրել նաև Թեմի առաջնորդարանի սերտ համագործակցությանը Վրաստանում Կրոնական հարցերի պետական գործակալության, Վրաց ուղղափառ եկեղեցու, Վրաստանում ՀՀ դեսպանության, Հայաստանի Հանրապետության սփյուռքի, մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության, Վրաստանում և նրա սահմաններից դուրս գործող կրոնական, հասարակական ու մշակութային կազմակերպությունների, հայրենակցական տարբեր միությունների այլ պատկան մարմինների հետ, կարևորելով Վրաստանում դարերի ընթացքում կառուցված մոտ 400-ից ավելի հայկական եկեղեցիների և ներկայումս կանգուն և կիսավեր են շուրջ 320-ից ավելի հոգևոր կառույցների լինելության արժանահիշատակ փաստը:

Միաժամանակ, ատեանախոսը չի շրջանցել և անդրադարձել է խորհրդայնացմամբ առաջ եկած փորձություններին ու դժվարություններին, որոնք տեղ գտան Հայ առաքելական եկեղեցու կյանքում, խոչընդոտելով նրա բնականոն զարգացմանը: Ա. Ասատրյանը շրջանառելով բազմաթիվ դիտարժան փաստեր և տվյալներ, ակնառու օրինակներով ցույց է տվել, թե ինչպես կոմունիստական գաղափարախոսության մենատիրության տարիներին իրագործված հակաեկեղեցական քաղաքականության հետևանքով ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ Վրաստանում Հայ առաքելական Սուրբ եկեղեցու թեմը հայտնվեց ծանր կացության մեջ, փակվեցին կամ ավերվեցին վաղ միջնադարից գործող մի շարք կոթողներ, փակվեցին նաև Վիրահայոց թեմի տարածքում գործող գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը, Թբիլիսիում քանդվեցին Վանքի մայր եկեղեցին, Կուկիայի Ս. Աստվածածին, Հավլաբարի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Խարփուխի Ս. Սարգիս, Ս. Հրեշտակապետաց, Մետեխի Ս. Վարդան, Ջգրաշենի Ավետյաց Ս. Աստվածածին, Նավթլուղի Ս. Գևորգ, Խոջիվանքի և այլ եկեղեցիներ, ինչը ծանրագույն հարված էր թեմին:

Ատենախոսը՝ Ա. Ասատրյանը անդրադառնալով ատենախոսությամբ առաջադրված խնդիրներին, ըստ ամենայնի կարևորել է այդ խնդիրները, ընդգծելով, որ Վիրահայոց թեմն առ այսօր չունի իրավաբանական անձի պատշաճ կարգավիճակ, որ Վրաստանում գոյություն չունի որևիցե օրենսդրական ակտ, որով կկարգավորվեին կրոնական կազմակերպություններին վերաբերող իրավունքներն ու պարտականությունները, կարծելով, որ դրանով գուցե հնարավորություն ընձեռվի Վիրահայոց թեմին վերադարձնել Վրաստանում հայկական պատմական եկեղեցիները, հոգալ պատմամշակութային կոթողների մասին:

Ատենախոսը կարևորելով քննարկված հարցերը, եզրակացության է եկել, որ Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. պատմության ուսումնասիրությունը ունի ոչ միայն արդիական, այլև գործնական հնչեղություն թեմական և ծխական կյանքի կազմակերպման օրենսդրական ուղենիշների մշակման և խնդիրների լուծման առումով, ինչպես նաև օգտակար նյութ դառնալ «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի համար:

Հետևաբար, ատենախոսին Ատենախոսությունում հաջողվել է առաջադրել պատմաքննության ենթակա նպատակային խնդիրներ.

- Ամբողջացնել Վիրահայոց թեմի գործունեության 1921-1991 թթ. պատմությունը.
- վերհանել այն բարդույթներն ու դժվարությունները, որոնց հետ բախվեց Վիրահայոց թեմը ստալինյան քաղաքական բռնաճնշումների շրջանում.
- քննության առնել Վիրահայոց թեմի գործունեությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում,
- արժևորել Վրաստանի հայկական կրոնական և մշակութային ժառանգությունը, և այն պատշաճ ներկայացնել.
- կարևորել հայկական մշակութային ժառանգության պահպանությունը՝ զուգահեռաբար կարևորելով Վիրահայոց թեմին խորհրդային իշխանության տարիներին բռնագրավված Թբիլիսիի Նորաշեն Ս. Աստվածածին, Ս. Նշան, Մողնու Ս. Գևորգ, Ս. Մինաս, Շամքորեցոց Ս. Աստվածածին (Կարմիր Ավետարան) եկեղեցիների, Ախալցխայի Ս. Վարդանանց եկեղեցին և այլ կրոնական հաստատությունների վերադարձման հարցը օրինական տիրոջը:

Ատենախոսության Ժամանակագրական շրջանակները ընդգրկում են խորհրդային կարգերի հաստատումից՝ 1921 թ. մինչև 1991 թ. ընկած ժամանակահատվածը:

Արված եզրահանգումներն, ընդհանուր առմամբ հիմնավոր են և պատճառաբանված:

Ներկայացվող թեկնածուական ատենախոսության թեման, անկասկած, հետաքրքիր է և շոշափվող հարցախմբի տեսանկյունից կարող է որոշակի արժեք ներկայացնել հայոց եկեղեցու պատմության ու գիտության հարակից բնագավառների հետազոտողների համար: Ատենախոսությունում օգտագործված են զգալի թվով աղբյուրներ, տարաբնույթ վավերագրեր և գրականություն, որոնք նպատակային են դիտարկվել՝ ուղեկցվելով համապատասխան հետևություններով և առաջարկներով:

Կարծում եմ, որ կարելի է ընդհանուր առմամբ հեղինակի այս տեսակետները որպես մոտեցում հարգել և քաղաքացիություն տալ որպես կարծիք: Ատենախոս Ա. Ասատրյանի աշխատանքից ակնհայտ է դառնում, որ պատմագիտության ոլորտ է մտնում ակտիվ, գիտական աշխատանքների մեջ խորամուխ լինելու որոշակի նախասիրություններ դրսևորող ակտիվ հետազոտող և պատմաբան:

Ատենախոսի՝ Արմեն Ասատրյանի հրապարակած գիտական հոդվածները լուսաբանում և արտացոլում են ուսումնասիրության բովանդակությունն ու հիմնական դրույթները: Ամփոփելով, սույն ուշագրավ ատենախոսության քննարկման կապակցությամբ հարկ ենք համարում նաև մասնավորապես նշել, որ Արմեն Ասատրյանի հրատարակած գիտական աշխատանքները արտացոլում են թեկնածուական թեզի հիմնական դրույթները:

Ատենախոսության գիտական նորույթը առաջին հերթին կայանում է նրանում, որ ատենախոսը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել փաստագրական, պատմագիտական գրականություն, տարբեր նորահայտ վավերագրեր, որոնք ամբողջական տեսքով ներկայացնում են Վիրահայոց թեմի 1921-1991 թթ. պատմությունը: Դիտարկվել և արժևորվել է առանձին թեմական առաջնորդների (Գևորգ արք. Չորեքչյան, Արտակ եպս. Սմբատյան, Գևորգ եպս.

Սերայդարյան) արգասաբեր գործունեությունը, ինչը Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմության ամբողջական համատեքստում ունի կարևոր նշանակություն:

Այդուհանդերձ, սույն աշխատության կապակցությամբ ուզում ենք արտահայտել մի շարք նկատառումներ, որոնք, կարծում ենք, հնարավոր է՝ էլ ավելի նպատակասլաց կարող էին դարձնել թեմայում քննարկված հիմնախնդիրների պատմաքննական վերլուծությունը, աշխատանքը զերծ պահեին որոշ անհարթություններից և թերացումներից.

1. Ատենախոսության ենթագլուխների վերնագրումները կարելի էր ավելի խնամքով ձևակերպել, խուսափելով նույնատիպ ձևակերպումներից.

2. գուցե կարելի էր առաջին գլխի առաջին ենթագլուխը չառանձնացնել, այլ տարալուծել ատենախոսության տեքստում՝ բավարարվելով համեմատական եզրերի անցկացումով.

3. Ցանկալի էր, որ ատենախոսը էլ ավելի խորքային առաջադրումներ ունենար և խորամուխ լիներ առաջադրված հիմնահարցի հետազոտման գործում՝ համեմատական եզրեր գտնելով ոչ միայն նախահախորհրդային պատմափուլի հետ, այլև հետխորհրդային զարգացումների հետ, որոնք ավելի մեծ բարդույթներ առաջ բերեցին թե՛ առհասարակ վիրահայության, այլև վիրահայոց թեմի գործունեությունում.

4. Թեման ինքնին շատ կարևոր է, և ելնելով մի շարք գործոնների հաշվառումից, կարծում ենք, պետք է խորացնել ատենախոսության ինչպես ամեն մի ենթագլխի, այնպես էլ ամփոփիչ բոլոր հետևությունները և եզրահանգումները՝ ուժեղացնելով վերլուծական-ընդհանրացնող կողմը.

*5.* Որոշակի առումով վիճարկելի է ատենախոսության 2–րդ գլխի 1–ի՝ «Վիրահայոց թեմի գործունեությունը *1941-1972 թթ.»* ձևակերպման հետ՝ կապված ժամանակագրական շրջանակների ընտրության հետ, ինչպես նաև *1972–1991 թթ.* ժամանակափուլի ընտրության հետ 3–րդ գլխում.

*6.* 2–րդ գլխի 1–ին ենթագլխում կարիք կա ավելի հարուստ և հանգամանալից ներկայացնել Վիրահայոց թեմի գործունեությունը 1941–1945 թթ. որը շատ հակիրճ է,

ավելի շատ ուշադրությունը բևեռվել է Սբ. Էջմիածնի գործունեության վրա, ինչը ըմբռնելի է.

7. Գուցե կարելի էր շրջանառության մեջ դնել նաև Թիֆլիսյան Ներսիսյան դպրոցին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը ի դեմս հետևյալ հրապարակման՝ «Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և նրա դերը Կովկասի կրթական կյանքում» միջազգային գիտաժողովի (2024 թ. հոկտեմբերի 17–18) նյութերի ժողովածու /Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Խմբ.՝ Ս. Պողոսյան. Եր., «Վահե Մկրտչյան» ԱՁ, 22024. –336 էջ:

8. Նկատվել են որոշ տեխնիկական վրիպակներ, անհարթ ձևակերպումներ, որոնք աշխատանքի հետագա հրապարակման պարագայում կարելի է հաշվի առնել և սրբագրել ներկայացված ուշագրավ աշխատանքը:

Նշված դիտողությունները, սակայն, ամենևին չեն նսեմացնում Արմեն Ասատրանի կողմից ներկայացված թեկնածուական ատենախոսության արժեքը:

Ամփոփելով, հարկ ենք համարում նաև նշել սույն ատենախոսության կապակցությամբ, որ սեղմագիրն արտացոլում Ա. Ասատրյանի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված թեկնածուական թեզի հիմնական դրույթները:

Ա. Ասատրյանին հաջողվել է ստեղծել կուռ շարադրված, գիտատեսական պատշաճ մակարդակով գրված մի աշխատանք, որը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ա. Ասատրյանի աշխատանքից ակնհայտ է դառնում, որ պատմագիտության ոլորտի մասնագետների ուշադրությանն է ներկայացվել գիտական առումով ընդհանուր առմամբ համակողմանի հետազոտված մի աշխատանք, որը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Ի մի բերելով վերն ասվածը, գտնում ենք, որ վերընշյալ դիտողություններն ամենևին էլ չեն նսեմացնում թեկնածուական ատենախոսության գիտական նշանակությունը: Ատենախոս Արմեն Հոկտեմբերի Ասատրյանին հաջողվել է ստեղծել գիտատեսական, պատմագիտական պատշաճ մակարդակով գրված մի աշխատանք, որը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Նկատի ունենալով վերընշյալը, գտնում ենք, որ Ա. Հ. Ասատրյանը

կատարել է գնահատելի աշխատանք, որից կարելի է զալ այն եզրահանգման որ, ատենախոսն արժանի է իր իսկ կողմից հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Ըստ այդմ մենք միջնորդում ենք ԲՈԿ-ի 004 Մասնագիտական Խորհրդի առաջ ատենախոս Արմեն Հոկտեմբերի Ասատրյանին շնորհելու պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ իր հայցած Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտության գծով, որին նա միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների
Ինստիտուտի հայ-վրացական հարաբերությունների
բաժնի ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ ՎԱՆԻԿ ՀՐԱՆՏԻ ՎԻՐԱԲՅԱՆ

Վ. Հ. Վիրաբյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
գիտական քարտուղար Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ
ՀԱԿՈԲ ՎԱՆԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

29.01.2026 թ.